Մրցույթ՝ «Երևանի Ղ. Ալիշանի անվան թիվ 95 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (22 դասաժամ), ֆիզիկայի (25 դասաժամ), ֆիզկուլտուրայի (36 դասաժամ), ռուսաց լեզվի (22 դասաժամ), պատմության (15 դասաժամ) և կենսաբանության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1. դիմում (Ձև 1),
2. մեկ լուսանկար 3x4 չափսի,
3. բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
4. անձը հաստատող փաստաթուղթ,
5. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
6. ինքնակենսագրություն (Ձև 5),
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ ,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
10. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ **սեպտեմբեի 7-ը** ներառյալ, ամեն օր՝ **ժամը 10:00-ից 15:00**-ը, բացի շաբաթ և կիրակի, ինչպես նաև այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 9-ին՝ ժամը 10:00-ին**, Երևանի Ղ. Ալիշանի անվան թիվ 95 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Նուբարաշեն, 13-րդ փ., 1 շ.:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 47-60-41 հեռախոսահամարով: